№7

Մենք հավասար ենք

Տեղեկատվական թերթիկ

Սեպտեմբեր 2008

Unison

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության
«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Սպիտակ քաղաքին կանաչ ճանապարհ

Օգոստոսի 29-ին Սպիտակ քաղաքի Կարմիր Խաչի մասնաշենքում աննախադեպ աշխուժություն էր տիրում: Պատճառը, թերևս, «Ունիսոն» ՀԿ-ի կողմից նախաձեռնած «Կյանքը շարունակվում է» խորագրով՝ հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսն էր: Այն անցկացվում էր 1988թ.-ի երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Ներկայացված էին բազմաթիվ գործեր հանրապետության տարբեր մարզերից: Սպիտակը նույնպես ունեցավ իր լուման. ցուցահանդեսի նմուշները համալրվեցին տեղի բնակիչ Արսեն Ասատրյանի նկարներով և փայտյա աշխատանքներով: Չնայած այն հանգամանքին, որ հեղինակը չի ստացել մասնագիտական կրթություն, նրա ստեղծագործություններում արտահայտված են վառ երևակայություն և հասուն արվեստագետին բնորոշ մտքի խորություն:

Հաշմանդամության թեման արծարծվեց ոչ միայն ցուցահանդեսի, այլ նաև Բաց Հասարակության Ինստիտուտի և Նիդեռլանդների Կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում անցկացված կլոր սեղանի ժամանակ:

Քննարկման ընթացքում ծավալվեց թեժ բանավեճ քաղաքապետարանի, տեղական ՀԿ-ների, ուսումնական, բժշկական և այլ հաստատությունների ներկայացուցիչների, այլ շահագրգիռ անձանց միջև:

Մասնավորապես, հակադիր էր մոտեցումը հաշմանդամներին աշխատանքով ապահովելու հարցի վերաբերյալ: Ոմանք նշեցին, որ աշխատանքի առկայությունը հաշմանդամի համար բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորության նախապայման չպետք է լինի. գերադասելի է ստանալ բարձր կենսաթոշակ և չաշխատել:

Ոչ բոլորն էին համամիտ այդ կարծիքին: Այսպես, օրինակ, «Սպիտակ ֆերմեր» ՀԿ-ի նախագահ Ա.Կարապետյանը նշեց. «Կարծում եմ, նպատակահարմար է ստեղծել մի գործարան կամ արտադրամաս, որը լիովին հարմարեցված կլինի հաշմանդամների համար և որում կաշխատեն միայն նման մարդիկ: Դա, անշուշտ, հարցի ժամանակավոր լուծում է, սակայն այն բազմաթիվ հաշմանդամներին հնարավորություն կտա դուրս գալ իրենց տներից, շփվել այլ մարդկանց հետ և ավելի մրցունակ դառնալ աշխատաշուկայում ձեռք բերած փորձի, հմտությունների և ինքնավստահության շնորհիվ»:

Հնչեցին բազմաթիվ այլ գործնական առաջարկներ և դրանց իրականացման տարբերակներ: Հուսանք, որ առավել իրատեսական և կիրառելի գաղափարները առաջիկայում կյանքի կկոչվեն համատեղ ջանքերի գործադրման արդյունքում:

Ավարտվեցին Պարալիմպիկ խաղերը

Պեկինում ավարտվեցին 2008թ. ամառային պարալիմպիական խաղերը, որին մասնակցում էին տարբեր երկրներից ժամանած հաշմանդամ մարզիկները: 21 մարզաձևերում խաղարկվեցին միանգամից 472 մեդալի հավաքածուներ:

Ամենահաջողը հանդես եկան Չինաստանի ներկայացուցիչները, որոնք խաղերի մեկնարկից առաջին տեղում էին և մյուս հավաքականներին նույնիսկ մոտ չթողեցին իրենց:

Չինաստանի պարալիմպիականները նվաճեցին 211 մեդալ, որից 89-ը ոսկե, 70-ը արծաթե, 52-ը բրոնզե:

էջ 2

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Իրավաբանի անկյուն
Հարց և պատասխան

Ես 1-ին խմբի հաշմանդամ եմ: Սայլակի կարիք ունեմ: Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել այն, ի՞նչ ժամկետով, և եթե սայլակը վերանորոգման կարիք ունենա, ո՞ւմ պետք է դիմել:

Լ.Ապրիլյան, 29 տ., ք. Կապան

Համաձայն 2007 թվականի ապրիլի 12-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաշմանդամը կամ նրա ներկայացուցիչը հաշմանդամի սայլակ ստանալու համար պետք է դիմի ՀՀ ԲՍՓ գործակալության վերականգնողական բաժին (հասցեն՝ Երևան, Արմենակյան 129), ներկայացնելով անձնագիր (ներկայացուցիչը նաև իր անձնագիրը), հաշմանդամի հաշմանդամությունը հավաստող վկայականի պատճենը և ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) գործակալության տարածքային մարմնի եզրակացությունը՝ սայլակի անհրաժեշտության վերաբերյալ: Բաժնում կնքվում է պայմանագիր և նշված պայմանագրով «Պրոթեզաօրթոպեդիկ» ՓԲԸ-ում (հասցեն՝ Երևան, Ծարավ աղբյուրի 55ա) հաշմանդամին տրամադրվում է սայլակ:

Հաշմանդամի սայլակը տրամադրվում է երեք տարի, իսկ փոքր տրամաչափի սայլակը՝ երկու տարի ժամկետով:

Ստորին վերջույթների ազդրային հատվածների երկկողմանի անդամահատումից հետո հեծանվասայլակ ստացած հաշմանդամին իր դիմումի համաձայն կարող է տրամադրվել նաև փոքր տրամաչափի սայլակ:

Պարագաները կազմակերպության կողմից հաշմանդամին տրամադրվում են անհատական հարմարեցումից և հաշմանդամին օգտագործման ձևը սովորեցնելուց հետո:

Հաշմանդամներին և սոցիալապես անապահով անձանց տրամադրված պարագաները վերանորոգում է նույն կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

Նշեմ, որ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունները կամ անհատ բարերարները նույնպես ժամանակ առ ժամանակ հաշմանդամի սայլակներ են տրամադրում, սակայն բոլոր դեպքերում դուք չեք զրկվում պետության կողմից անվճար տրամադրվող սայլակներ,պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ ստանալու՝ օրենսդրորեն ամրագրված ձեր իրավունքից:

Իզաբելլա Կարապետյան
«Ունիսոն» ՀԿ իրավաբան

Սկիզբը՝ էջ 1-ում

Չինաստանին հաջորդեց Մեծ Բրիտանիան 102 մեդալով (42 ոսկե, 29 արծաթե, 31 բրոնզե), իսկ ԱՄՆ-ի հավաքականը 99 մեդալով (36-35-28) եզրափակեց լավագույն եռյակը: Լավագույն տասնյակում հայտնվեցին նաև Ուկրաինայի, Ավստրալիայի, ՀԱՀ-ի, Կանադայի, Ռուսաստանի, Բրազիլիայի և Իսպանիայի հավաքականները:

Ընդհանուր առմամբ՝ մեդալի արժանացան 76 երկրների ներկայացուցիչներ: Հայաստանը ընդամենը մեկ մասնակից ուներ այս խաղերում: Կանանց ծանրամարտի մրցաշարում հանդես եկավ 22-ամյա գյումրեցի Գրետա Խնձրցյանը, որին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Մեդալի չարժանացան նաև վրացիները, իսկ Ադրբեջանը միանգամից 10 մեդալ նվաճեց պարալիմպիական խաղերում:

Աղբյուրը՝ www.a1plus.am

Մասնակցե՛ք մրցույթներին և հաղթե՛ք

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը և «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը ՀՀ-ում տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում անցկացնում են **հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների հանրապետական մրցույթ**:

Մրցույթին կարող են մասնակցել ցանկացած տեսակի հաշմանդամություն ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

Զուգահեռաբար «Ունիսոնը» անցկացնում է **16-40 տարեկան հաշմանդամ կանանց գեղեցկության ֆոտոմրցույթ**:

Երկու մրցույթների մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը տեղի կունենա հոկտեմբերի 10-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան դահլիճում:

Ձեռքի աշխատանքները և գեղեցկության մրցույթի մասնակիցների լուսանկարներն ընդունվում են **մինչև սեպտեմբերի 30-ը**:

Տեղեկությունների համար զանգահարել **(010) 52-21-70** հեռախոսահամարով:

«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը
հաշմանդամներին անվճար տրամադրում է

- զբաղվածության կենտրոնի ծառայություններ (ռեզյումեի կազմում, հարցազրույցին նախապատրաստում և այլն)
- իրավաբանական խորհրդատվություն
- հոգեբանական աջակցություն

Անցկացվում են նաև կերպարվեստի պարապմունքներ:

52-21-70

Նախագիծն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Գլխավոր խմբագիր
Արմեն Ալավերդյան

Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան
Իզաբելլա Կարապետյան

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ,
Երևան 0002, Դեմիրճյան 36

Հեռ./ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am